

ԱԼՅՈՒԶԻԱՆ ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԵՐԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Մինչ Օսկար Ուայլդի ստեղծագործություններին ներհատուկ տարատեսակ ալյուզիաներին անդրադառնալը, հարկ է ասել, որ Ուայլդից կատարված հայերեն թարգմանությունները ժամանակային առումով բավականին հին են և ընդգրկում են 1900-ական թթ., այսինքն՝ Ուայլդի մահվանը (1900 թ.) անմիջապես հաջորդող ժամանակահատվածը: Ուշագրավ է, օրինակ, որ Մ. Մեծարենցն Ուայլդի երկու գործերը՝ «Ղատաստանը» և «Իմաստություն սորվեցնողը», հավանաբար, թարգմանել է 1909-ից առաջ, քանի որ դրանք, իբրև արդեն պատրաստի նյութեր, տպագրվել են 1909-ին՝ «Ազդակ» շաբաթաթերթի (1908-1909թթ.) N18-ում և N29-ում՝ Մեծարենցի մահից հետո («Մեծարենցի անտիպ ձեռագիրներեն» ընդհանուր խորագրի ներքո): Նշանակում է՝ նշյալ թարգմանությունները արդեն իսկ կատարված են եղել թարգմանչի մահից առաջ, գուցե 1908-ի ընթացքում, գուցե դրանից էլ առաջ: Հավանական է, որ Մեծարենցը դրանք թարգմանել է 1908-ից առաջ, 1900-ական թթ.: Ինչու՞ է հավանական թվում սա: Որովհետև, նախ, Օ. Ուայլդի անունը արդեն իսկ հռչակված էր իր կենդանության օրոք և 1900-ական թթ. առավել ևս: Պոլսահայ մշակութային կյանքը ևս այդ ժամանակ հագեցած էր անգլիացի մի շարք գրողների՝ Օսկար Ուայլդի, Էոժեն Ֆիլդի, Թոմաս Բարլայլի և մյուսների ստեղծագործությունների գաղափարագեղագիտական նկրտումների վերաբերյալ արծարծումներով:

Եվ երկրորդ, ինքը՝ Մեծարենցը, ըստ կենսագիրների (Թ. Ազատյան և ուրիշներ), մշտապես մի առանձին սեր է տածել վերոնշյալ անգլիացի հեղինակների և, մասնավորապես, Օ. Ուայլդի ստեղծագործությունների հանդեպ, զնահատել վերջինիս էսթետիկական աշխարհայացքը, նրա «գեղեցկության պաշտամունքն ընդդեմ բուրժուական պրակտիցիզմի» (Հայսվերդյան 1980 : 434): Սակայն տեղին է իսկույններ նշել, որ Մեծարենցը թեև ազդվել է ժամանակի եվրոպական գրականությունից, և ինչպես ինքն է գրում «Ինքնադատության փորձ մը» հոդվածում՝ «իրեն գլխավոր ազդակ եղած են Պոլսի միջավայրը, ֆրանսիական գրականությունը կամ անգլիականը» (Մեծարենց 1956:270), սակայն գլխավոր ազդակը եղել է հայրենի Բիսնկյան գյուղը՝ Արածանի գետի ժեռուտ ափին: Ինչևէ, Մեծարենցին գրավել է ուայլդյան էսթետիկան (զեղապաշտությունը), որն ըստ էության ուղղված էր ընդդեմ եսամոլական-քաղքենիական հասարակության: Նույն եսամոլական ու քաղքենիական դրսևորումները, առավել վայրի ձևերով, առկա էին նաև պոլսական հասարակության

մեջ, ուստի, կարելի է հավաստել, որ ուայլդյան գեղագիտությունը, որն իր սուր սայրով ուղղված էր «կավե ոտքերով հսկայի»՝ Բրիտանական կայսրության և, առհասարակ, ողջ հակագեղարվեստական դարաշրջանի դեմ, հարազատ էր մաս Մեծարենցին, մի բանաստեղծի, ում մեջ, իր իսկ բնութագրմամբ՝ «...ծիածանվեր են հավիտենական զգացումներն ու մտածումները» (Մեծարենց 1956:272):

Եվ այսպես, առաջին գործը, որ Մեծարենցը թարգմանել է Ուայլդից՝ «Դատաստանատուն» է, որտեղ, ըստ ամենայնի, Մեծարենցին գրավել է Ուայլդի գեղապաշտությունը, որը երևակվում է հետևյալ տողերի մեջ.

«Եվ ըսավ Աստված Մարդուն. - Դուն գեշ կյանք մը վարեցիր, ու փնտռուկեցիր:¹ Գեղեցկությունը՝ զոր աչքիդ առջև դիր...» (տես՝ Մեծարենց 1956:249): Ըստ Ուայլդի, այսպիսով, Աստված մեղք է համարում գեղեցկության անգիտացումը: Թեև քանիցս գրվել է, որ Ուայլդը հեղինակ է թևավոր ասույթների, դարձվածքների, հայտնի դարձվածքների անսպասելի փոփոխումների, պարադոքսալ ձևակերպումների² և այլն, սակայն գրեթե չի խոսվել ուայլդյան՝ Աստվածաշնչից կատարած ալյուզիաների մասին: Ընդ որում *ալյուզիա* ասելով պետք է հասկանալ դրա բազում տարատեսակները՝ մեջբերում, փոփոխված մեջբերում, ասույթի արդիականացում, սյուժետային ինչ-ինչ մոտիվների ներ-հյուսում հեղինակային-գրողական սյուժեի մեջ և այլն, մի խոսքով այն ամենը, ինչը հետազոտողներն անվանել են «ուղղահայաց համատեքստ», դրա մեջ առաջին հերթին տեսնելով գրական ալյուզիաները և մեջբերումները (Грибачев 1991:7):

Մեծարենցի կատարած «Դատաստանատուն»-ի՝ հայերեն թարգմանության մեջ ուշագրավ են հետևյալ աստվածաշնչյան ալյուզիաները.

1. Եվ Աստված բացավ մարդուն կյանքին Գիրքը (էջ 249): Զմմտ.՝ «Եւ բացուեց նաեւ մի այլ գիրք՝ կեանքի գիրքը» (Չայտն. 20:12):
2. Մանուկներուն հացը առիր և շուներուն կերցուցիր (էջ 249): Զմմտ.՝ «...լավ չէ մանուկների հացը առնել եւ շների առաջ զցել» (Ղուկ. 7:27):
3. Սենյակիդ պատերը պատկերներով նկարեցիր... (էջ 249): Զմմտ.՝ «Մարդու որդի, տեսնու՞մ ես, թէ Իսրայելի այդ տան նախնիներն ինչէր են անում այստեղ, խավարի մեջ, յուրաքանչյուրն իր ծածուկ սենյակում» (Եզեկ. 8:12):
4. Յոթը սեղաններ կանգնեցիր այն մեղքերուն՝ որոնց համար մեռա, ու կերար բաներ՝ զոր ուտելու չէիր (էջ 249): Զմմտ.՝ «Քանի որ...կերար այն ծառի պտղից» (Ծննդ. 3:17), «...իմ ժողովրդի անօրենությունների պատճառով նա մահուան մատնուեց» (Եսայի 53:8):
5. Իմ երկրիս վրա ուսկե չինվեցար՝ շատ մը խողխողանքներ ըրիր (էջ 249): Զմմտ.՝ «Քո երեսի քրտինքով ուտես հացդ մինչեւ հող դառնալդ, որից ստեղծուեցիր, որովհետև հող էիր եւ հող էլ կը դառնաս» (Ծննդ. 3:19):

Բացի այդ այս նշված ալյուզիաներից՝ առկա են նաև այլ ալյուզիաներ (օր.՝ «Արևին ամոթ՝ և լուսնին շամբշամք ցուցուցիր», «դրանով ծախեցիր քայլակից բարեկամդ» և այլն), որոնց արխետիպային նմուշները թեև առկա են Աստվածաշնչում, բայց կենտրոնացված չեն որևէ նախադասության կամ պարբերության մեջ, այլ՝ ցրված են Սուրբ Գրքով մեկ, տարբեր տեղերում: Ուայլդն, ահա, քաղում-ընդհանրացնում է այդ ցրված, սփռված ասույթները կամ մտքերը՝ ստեղծելով, այսպես կոչված, նախատիպերից կամ արխետիպերից հեռացած ալյուզիաներ, որոնք, այնուամենայնիվ, չեն կորցրել իրենց «մեջբերումային» բնույթը: Դրանք, ավելի շուտ, ոչ թե մեջբերումներ են, այլ յուրատեսակ վերհիշեցումներ կամ հին, ավանդական, աստվածաշնչային տեքստերի հեղինակային-ուայլդյան փոփոխակներ՝ դրված լեզվաբանաստեղծական մոր ձևերի մեջ: Դրանք հաճախ հանդես են գալիս որպես դարձվածային միավորներ, որոնք, կարելի է ասել, երկրի պատմամշակութային անցյալի ու ներկայի յուրօրինակ խտացումներն են, և ինչպես նշում են հետազոտողները՝ գոյություն ունի մշակութային կոնոտացիա (коннотация), որը դրսևորվում է լեզվական խտացումների կամ նշանների միջոցով, ցույց տալով լեզու-մշակույթ փոխառնչության առկայությունը (Маслова: 47-63):

Օ. Ուայլդի պարագայում ևս, ինչ խոսք, պետք է նկատի ունենալ Մեծ Բրիտանիայի անցած պատմամշակութային անցյալը և ներկան, քրիստոնեական հավատքի ընդունումը, Անգլիական եկեղեցու դավանաբանությունը, կղզեբնակների (անգլոսաքսեր, իռլանդացիներ, շոտլանդացիներ, ուելսցիներ) հոգեբանությունը, Բրիտանական կայսրության կազմավորումն ու նրա վարած գաղութային քաղաքականությունը, հետկայսերական իրականությունը՝ Մեծ Բրիտանիայում, իրավարարական շարժումների և իրավական ակտերի ընդունման պատմությունը և այլն:

Այս ամենը, երբեմն ուղղակիորեն, երբեմն էլ միջնորդավորված կերպով, արտահայտվել են Օ. Ուայլդի ստեղծագործություններում և գտել իրենց տեքստային, լեզվաոճական դրսևորումները, որոնցից մեկն էլ վերը նշված աստվածաշնչային ալյուզիաներն են:

Վերջիններս շատ են նաև Ուայլդի «Իմաստություն սորվեցնողը» գործի մեջ³: Բերենք մի քանի ցայտուն օրինակներ.

1. Իրիկուն մը դուրս ելավ տասնմեկերորդ քաղաքեն և իր աշակերտներն ու մեծ բազմություն մը իրեն կը հետևեին. լերան մը վրա ելավ ու հոն ժայռի մը վրայ նստավ, և իր աշակերտները շուրջը հավաքվեցան, ու բազմությունը ծնրադրեց հովիտին մեջ (էջ 252): Գմնտ.՝ «Եւ տեսնելով ժողովրդի բազմութիւնը՝ բարձրացաւ լերան վրայ: Եւ երբ այնտեղ նստեց, նրա մօտ եկան իր աշակերտները. եւ նա սկսեց նրանց ուսուցանել...» (Մատթ. 5. 1-2):

2. Գլուխը երկու ափին մեջ առավ ու լացավ...(էջ 252): Հմմտ.՝ «Եւ Յիսուս արտասուեց» (Հովհ. 11:35):

3. - Աստված քեզ լեցուց իր կատարյալ գիտությունով, և դուն այդ գիտությունը ուրիշներուն հանձնեցիր. մեծագույն մարգարիտը բաժնեցիր և անկար հանդերձանքը բզբտեցիր (էջ 252): Հմմտ.՝ «Այսպես է ասում Տէր Աստված. դու կատարեալ իմաստութեան նմուշ ես եղել, գեղեցկության պսակ» (Եզեկ. 28:12), «Դարձյալ՝ երկնքի արքայութիւնը նման է մի վաճառականի, որ գեղեցիկ մարգարիտներ էր որոնում. եւ գտնելով մի թանկարժէք մարգարիտ՝ գնաց վաճառեց իր ամբողջ ունեցածը եւ այդ մարգարիտը գնեց» (Մատթ. 13.45-46): «Իսկ զինուորները, երբ Յիսուսին խաչը հանեցին, վերցրին նրա զգեստները եւ չորս մաս արեցին. յուրաքանչիւր զինուորի՝ մէկ մաս: Իսկ քանի որ պատմութեան առանց կարի էր, վերելից ներքեւ ամբողջովին հիւսած շուրջանակի, ուստի միմեանց ասացին. Այդ չպատռենք, այլ դրա վրա վիճակ գցենք...» (Հովհ. 19.23-24):

Ինչպես տեսնում ենք՝ Ուայլդի նշյալ գեղարվեստական այլուզման սինթեզված է Աստվածաշնչի տարբեր մասերից՝ Եզեկիելի մարգարեությունից, Մատթեոսի և Հովհաննեսի Ավետարաններից: Եթե ուայլդյան հերոսը Հոգու կողմից մեղադրվում է նրա համար, որ նա մարգարիտը բաժանել է և անկար հագուստը բզկտել, նա դրանով իսկ կատարել է Աստվածաշնչում գրվածի հակառակը. Աստվածաշնչում արտի մեջ մարգարիտ գտնող մարդը գնում վաճառում է իր ողջ ունեցվածքը, որ գնի այդ արտը՝ հանում մեծարժէք մարգարտի, իսկ Հիսուսին խաչող զինվորները թեւ վիճակ են գցում նրա մյուս զգեստների վրա, բայց ափսոսում են կամ չեն համարձակվում պատռել («բզբտել») անկար հանդերձը՝ «շուրջանակի հյուսված պատմութեանը»: Այսպիսով, ուայլդյան հերոսը, կատարում է Աստվածաշնչում նկարագրված գործողությունների հակառակը՝ բաժանում է «մեծագույն մարգարիտը» և բզկտում անկար հանդերձանքը, որն ակնարկում է Հիսուսի՝ շուրջանակի հյուսված պատմութեանը:⁴

4. Ամբոխը տրտնջաց, ըսելով. – Մեզ անապատը առաջնորդեցիր և մեզի ոչ մեկ սնունդ տվիր (էջ 253): Հմմտ.՝ «Եգիպտացիների երկրից դուրս գալու երկրերդ անսուայ տասնհինգերորդ օրը իսրայելացի ողջ ժողովուրդը անապատում դժգոհեց Մովսէսից ու Ահարոնից: Իսրայելացիներն ասացին նրանց. «Ավելի լավ կլիներ Տիրոջ հարուածների գոհը դառնայինք Եգիպտացիների երկրում, երբ մսով լի կաթսաների մոտ էինք նստում ու կուշտ հաց ուտում, քան բերեիք մեզ այս անապատը, որ ողջ ժողովուրդին սովամահ անեք» (Ելք 16.2-3):

5. - Անիկա ավելի թանկագին է, քան աշխարհը բոլոր ծիրանին ու մարգարիտները, պատասխանեց ճգնավորը (էջ 254): Հմմտ.՝ «Լավ է ի՛նձ ունենալ, քան ոսկի և անգին քարեր» (Առակներ 8.19), «Իմաստությունը լավ է անգին քարերից, եւ թանկարժէք ոչ մի բան չի հավասարուի նրան» (Առակներ 8.11):

«ԱՍՆԻԿԱ»-ն, իհարկե, իմաստությունն է, մեծարենցյան թարգմանությամբ՝ գիտությունը: Վերոնշյալ աստվածաշնչյան ալյուզիան, որ հիմնականում համապատասխանում է արիստոփան, գրողի նպատակադրմամբ կոչված է ցույց տալու գանձերի տարբերությունը. գանձ կա, որ տանում է դեպի Աստծո թագավորություն, գանձ էլ կա, որ տանում է դեպի հավիտենական կորուստ, որը սիմվոլացնում է «Յոթ Մեղքերու քաղաքը»:

6. «Երեք օրվան միջոցին ճամփան բռնեց զնաց երիտասարդ ավագակին ետևեն, հորդորելով, որ ետ դառնա ու Յոթը Մեղքերու քաղաքը չը մտնե» (Էջ 255): Այստեղ թեև հնարավոր չէ մատնանշել աստվածաշնչյան մի որևէ քաղաք, որ կոչվի այդպես՝ յոթ մեղքերի քաղաք, սակայն առկա են աստվածաշնչյան հեռավոր անդրադարձումները՝ մեղքերի վերաբերյալ, և, մասնավորապես, սուրբ հայերի սահմանած յոթը գլխավոր մահացու մեղքերը՝ հպարտություն, նախանձ, բարկություն, ծուլություն, ազահություն, ոսկրամոլություն, որկրամոլություն, բղջխսիրություն:

7. Մինչդեռ հոն կը մնար արտասվագին, զգաց, որ մեկը իր քովը ոտքի կեցած էր. արույրե ոտքեր ու բարակ բուրդի խեչ մազեր ուներ ան (Էջ 256): Զմնտ.՝ «...եւ նրա գլուխն ու մազերն էին ինչպես սպիտակ բուրդ եւ ինչպես ծիւն, եւ նրա աչքերը՝ ինչպես կրակի բոց. եւ նրա ոտքերը՝ նման հնոցի մէջ ծխացող հրաշէկ պղնձի...» (Հայտն. 1.14-15): Ակներև են ուայլոյան ալյուզիայի և աստվածաշնչյան նախատիպի միջև նույնությունները՝ մազերը ճերմակ՝ ինչպես բուրդ, ոտքերը՝ պղինձ շիկացած: (Հիսուս Քրիստոսի նկարագիրը՝ նրա Երկրորդ գալստյան ժամանակ): Այսպիսի կերպարանքով է նա մոտենում Ուայլդի գրվածքի հերոսին՝ ճգնավորին, որին Աստծո գիտությունից զատ՝ շնորհվում է նաև Աստծո կատարյալ սերը՝ իր կատարած փրկավետ գործի դիմաց:

Պետք է ասել, որ բացի նշված ալյուզիաներից, Ուայլդի նշյալ գործերում (մեծարենցյան թարգմանություններ) առկա են նաև շատ «հեռավոր», գրեթե «անբռնելի» ալյուզիաներ, ինչպես նաև առանձին բառեր, բառակապակցություններ (մակդիրավոր արտահայտություններ), որոնք իայտնապես սերում են աստվածաշնչյան տեքստերից. այդպիսիք են՝ «կարծր սիրտ» բառը, «լուծություն տիրեց», «որքերուն ժառանգությունը», «հաճույքի մը աղմուկը» և մյուս բառակապակցությունները: Օրինակ, «կարծրասիրտ»-ը կամ անջատ՝ «կարծր սիրտ»-ը գալիս է վերստին Աստվածաշնչից. «Երբ փարավոնը տեսաւ, որ դժվարութիւնը վերացել է, նորից կարծրացաւ նրա սիրտը...» (Ելք 8.15): Զնարավոր է ցույց տալ նաև մյուս արտահայտությունների նախատիպերը տարբեր գրքերում՝ սաղմոսներում, մարգարեություններում, Ավետարաններում, առաքելական ուղերձներում կամ Զովհաննեսի Հայտնությունում:

Սակայն պետք չէ *անվերապահորեն ընդունել* ուայլոյան ալյուզիաներն իբրև աստվածաշնչյան նախատիպերի հարազատ վերարտադրություն՝ թեկուզև

գեղարվեստական նոր, թարմ լեզվամտածողությամբ՝ երբեմն այդ այլուզիաները ունեն մեծ ներքին միտում՝ հակադրվել Սուրբ Գրքի սուրբ ճանաչված որոշ դոգմաներին և ի հայտ բերել դրանց այլընտրանքային ըմբռնումները։ Այնպես որ ուայլոյան տեքստերում առկա աստվածաշնչյան այլուզիաները որքանով որ հարազատ են մեր գրողական ինքնությանը, նույնքան էլ երբեմն զվարթ լեզվախաղի, պարադոքսալ որևէ արտահայտության համար կարծես հենք են ծառայում՝ համատեքստում օժտվելով նոր իմաստներով, և ինչպես գրում է մշակութաբան, գրականագետ Յու.Մ. Լոտմանը՝ ինչպես շատ ոլորտներում, այնպես էլ գեղարվեստական լեզվի մեջ մշտապես տեղի է ունենում կոդերի (կոդավորումների) թարմացում (Лотман 1999:165)։ Այս առումով աստվածաշնչյան և մյուս կարգի այլուզիաները Ուայլդի համար հաճախ ծառայել են իբրև ելակետ՝ իր սեփական խոսքի թարմացման համար։

Լեզվական-լեզվաոճական թարմացումների հետամուտ ուայլոյան դիրքորոշումը, մեր կարծիքով, հարազատ է եղել մեծ Վ. Տերյանին՝ հայոց բանաստեղծական ու հրապարակախոսական լեզվի բարեփոխչին։

Թերևս պատճառներից մեկն էլ Տերյանին հարազատ այդ «ուայլոյան դիրքորոշումն» է եղել, որ մեծ ձեռնարկել է Ուայլդի «Սալոմե» դրամայի թարգմանությունը՝ բնագրից, այսինքն՝ ֆրանսերենից, քանի որ Ուայլդն այն գրել է ֆրանսերենով։ Ինչպես երևում է Տերյանի նամակներից, մեծ այս թարգմանությունը ձեռնարկել է 1910 թվականին կամ դրանից առաջ։⁵ Դետագայում այդ թարգմանությունը լույս է տեսել Տերյանի տարբեր տարիների ժողովածուներում (տես Տերյան 1973:217-254)։

Ուայլդի այս դրաման՝ մեկ արարով, պետք է ասել, հույժ ուշագրավ է նրանով, որ ամբողջովին Նորկտակարանային այլուզիա է, որում առկա են ինչպես շեղումներ Նոր Կտակարանի համապատասխան մասերից (օր.՝ Մատթ. 3, Մատթ. 11, Ղուկ. 7. 18-35, Մատթ. 14, Մարկ. 6, Ղուկ. 9), որոնցում տրվում է Զովհաննես Մկրտչի գործունեությունը և գլխատումը։ Նոր կտակարանյան անունները՝ Զովհաննես, Զերովդէս, Զերովդիա, դրամայում փոխված են (Զովհաննես-ը՝ Յոքանաան, Զերովդէս-ը՝ Զերովդ Ամտիպա, Զերովդիա-ն՝ Զերովդիադա), իսկ Զերովդիայի դստեր անունը Կտակարանը չի տալիս. Ուայլդը տալիս է մեր անունը՝ Սալոմե։ Ամենայն հավանաանությամբ Ուայլդն օգտվել է ոչ միայն կանոնական Աստվածաշնչից, այլ պարականոն գրքերից՝ կերտելով միստերիալ գործողություններ հիշեցնող մի դրամա՝ գրված աստվածաշնչյան Սուրբ այլուզիաներով, որոնք հաճախ փոխակերպվում են՝ հեղինակի գեղագիտական նկրտումների համաձայն։

1. «Կարծես մի արքայադուստր է, որի ոտները սպիտակ աղավմիների են նման» (էջ 219)։ Զմնտ.՝ «Նրա աչքերը նման են աղավմիների» (Եւգ Երգոց 5.12)։

2. «Ինձնից հետո գալու է մի ուրիշը, ոի ավելի գորավոր է, քան ես: Ես արժան չեմ նրա կոչիկների կապերն արձակելու: Երբ նա գա՝ անապատը պիտի ցնծա: Անապատը պիտի ծաղկի որպես շուշան: Կույրերի աչքերը լույս պիտի տեսնեն և խուլերի ականջները պիտի բացվեն: Նորածին մանուկը վիշապների բնին պիտի դնե իր ձեռքը և առյուծներին, բաշերից բռնած՝ պիտի տանի» (էջ 221): Այստեղ շատ են և նույնությունները՝ Նոր Կտակարանի հետ, և որոշ ազատ-ստեղծագործական այլուզիաները՝ ընդ որում, քաղված Աստվածաշնչի տար-բեր մասրից և ի մի բերված Յոբանաանի՝ Հովհաննես Սկրտչի խոսքի մեջ: Հմմտ.՝ «Ես ձեզ ջրով եմ մկրտում ապաշխարութեան համար, բայց ով գալիս է ինձնից յետոյ, ինձնից ավելի հզոր է, եւ ես արժանի չեմ հանելու նրա կոչիկները...» (Մատթ. 3. 11), «Թող ուրախանայ ծարաւած անապատը, թող ցնծայ անապատը ու ծաղկի ինչպես շուշանը...» (Եսայի 35. 1-2), «Գնացե՛ք պատմեցե՛ք Յովհաննէսին, ինչ որ դուք լսեցիք եւ տեսաք. կույրերը տեսնում են, կաղերը՝ քայլում, բորոտները՝ մաքրւում, խուլերը՝ լսում, մեռելները՝ յառ-նում...» (Մատթ. 11. 4-5), «Գայլն ու գառը միասին պիտի ուտեն, հորթը, ցուլն ու առյուծը միասին պիտի սնվեն, եւ մատաղատի մանուկը պիտի հովուի նրանց, եւ առիւծը, ինչպես եղը, յարդ պիտի ուտի: Մատաղատի մանուկն իր ձեռքը պիտի մտցնի իժերի բունը եւ իժերի ձագերի բունը...» (Եսային 11. 6-9):

3. «Նա ուղտի ստն էր հագած և մեջքին կաշվե գոտի ուներ...» (էջ 222): Հմմտ.՝ «Եւ ինքը՝ Յովհաննէսը, ուղտի մագից զգեստ ունէր և կաշուե գոտի իր մեջքին» (Մատթ. 3. 4):

4. «Այդ օրն արեգակը սև կլինի, որպես ստևի վերարկու և լուսինը կլինի կարմիր, որպես արյուն. և երկնքի աստղերը գետին կթափվեն, որպես թզենու կանաչ պտուղներն են թափվում...» (էջ 240): Հմմտ.՝ «Այդ օրերի նեղութիւնից անմիջապէս յետոյ, արեգակը պիտի խաւարի, եւ լուսինը իր լոյսը չպիտի տայ, եւ աստղերը երկնքից պիտի ընկնեն...» (Մատթ. 24. 29):

5. «Քո մարմինն սպիտակ է, որպէսշուշանը...» (էջ 229): Հմմտ.՝ «Ես դաշտերի ծաղիկ եմ, հովիտների շուշան» (Երգ երգոց 2.1):

Հնարավոր է շարունակել աստվածաշնչյան մեջբերումների, անդրա-դաձների, լայն առումով՝ այլուզիաների շարքը, բայց եղածն էլ բավական է արձանագրելու, որ Օ. Ուայլդի ստեղծագործությունների բնորոշ մասն են այլուզիաները և դրանց լեզվաբանաստեղծական փոխակերպումները:

Այստեղ անդրադարձանք Օ. Ուայլդի սոսկ երեք գործերի հայերեն թարգմանություններին՝ կատարված Մ. Մեծարենցի և Վ. Տերյանի կողմից. թարգմանություններ, որոնք մոլուշօրինակ և հիմք են ծառայել հետագա թարգ-մանությունների⁶ համար և որոնցում տեղ գտած բազմապիսի այլուզիաներին հնարավոր է անդրադառնալ մեկ այլ՝ առավել ծավալուն հետազոտությամբ:

Ծանոթագրություններ

1. «Փնտտակեցիր» բառը «փնտտել»-ի հոմանիշներից է և նշանակում է՝ ա) տարբեր տեղերում փնտրել, բ) երկար ժամանակ փնտրել (տես Սաքապետոյան 2000:316): Այստեղ Ստված մարդուն ուզում է ասել, որ դու, փոխանակ իմ մեջ փնտրելու գեղեցկությունը, փնտրել ես անարժան բաների մեջ:
 2. Ուայլդի կենսագիրներն ու գրականագետները նշում են, որ նա թևավոր խոսքերի, պարադոքսալ ասույթների, նուրբ հումորի վարպետ է եղել ոչ միայն իր գործերում (հեքիաթներ, պատմվածքներ, պիեսներ, վեպ), այլև բանավոր խոսքում, իբրև գրուցակից և բանախոս: Իզուր չէ, որ նա ինքն իր մասին ասել է, թե՝ «ես հանճարս վատնեցի գրույցներում, իսկ տաղանդս տվեցի գրականությանը» (տես Օսկար Ուայլդ, Երկեր, Եր., 1980, էջ 435):
 3. Այս գործում, պիտի ասել, առկա են ոչ միայն բուն աստվածաշնչյան, այլև սրբերի վարքագրություններից քաղված և տրանֆորմացված ալյուզիաներ: Վերջիններիս քննարկումը ենթադրում է մի առանձին ուսումնասիրություն:
 4. Հավանաբար Ուայլդին ծանոթ և հոգեհարազատ է եղել Քրիստոսի անկար, շուրջանակի հյուսված պատմությանի մեկնությունը՝ տրված Եկեղեցու սուրբ հայերի կողմից: Ըստ այդ մեկնությունների՝ պատմությանը Հիսուսի արդարության և Եկեղեցու սիրո միության խորհրդանշանն է: Այդ արդարությունը կամ սրբությունը ենթական չէ բաժանման: (Տես Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Եր., 2002, հաշվելություն հոդվածը):
 5. Ուշագրավ է, որ Վ.Տերյանից առաջ Օ. Ուայլդի «Սալոմե»-ն թարգմանել է (անգլերենից) Մանիկ Պերպեդյանը: Տես Տերյան Վ., Երկերի ժողովածու, հ. 1-4, հ. 2, Եր., 1973, էջ 383-385:
 6. Արժե հիշատակել Վ. Փարթամյանի «Հայ-անգլիական գրական առնչությունները» գիրքը (Եր., 1975), որում տրված է Ուայլդից կատարված հայերեն թարգմանությունների մանրամասն պատմությունը՝ սկսած 1900-ական թթ.:
- Ուայլդից թարգմանվել են առանձին գործեր՝ Հ. Խաչմանյանի թարգմանությամբ (Կ.Պոլիս, 1910), ապա՝ հեքիաթները (Մոսկվա, 1920), «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպը և «Իդեալական անուսիքը» պիեսը (Երևան, 1972), ինչպես նաև հեքիաթներն ու պիեսները՝ Երկեր խորագրով (Երևան, 1980):

Օգտագործված գրականության ցանկ

1. Ստվածաշունչ, Ս. Էքմիածին, 1994
2. Հախվերդյան Լ., Օսկար Ուայլդ (Վերջաբանի փոխարեն), // Օսկար Ուայլդ, Երկեր (թրգմ. Գ. Հախվերդյան), Եր., 1980, էջ 433-437:
3. Մեծարեց Ս., Երկեր, Եր., 1956, էջ 269-281, էջ 249-256:
4. Սաքապետոյան Ռ.Կ., Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական բացատրական բառարան, Եր., 2000:
5. Гюббенет И.В., Основы филологического интерпретации литературно-художественного текста, М., 1991.
6. Маслова В.А., Лингвокультурология, 2-е изд., М., "Academia", 2004.
7. Лотман Ю.М., Внутрь мифических миров. Человек-текст-вселенная-история, М., "Языки русской культуры", 1999.
8. Տերյան Վ., Երկերի ժողովածու, հ. 1-4, հ. 2, Եր., 1973: